

G. Veyne

Manuscript

891.99

U-27

1922

790

ԲԱՆՎ.-ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 5

Վ Ա Ր Զ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

№ 5

ԳԵՂԱՄ ՍԱՐԹՍՆ

Պ Ա Տ Մ Վ Թ Ր Ք Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ
1928.

891.99
Ս-27

12 MAR 2011

391.99
U-27 *պ*

ԲԱՆՎ.-ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱԿՈՐ
Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
№ 5 № 5

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

«ԿՈՄՈՒՆԻ ՋԱՂԱՅՑ»

1.

Այն չերեկո, չերբ լամպի ազոտ լուսի տակ իրենց խրճիթի սեացած պատերը հազիվ ելին չերևում, Պետրոսն իր շորերն եր կապկպում. նրա սիրտը թո՛վում եր մի տեսակ տխրութ՜յուն. նա կապեց իր շորերը, փաթաթեց գեղեցիկ դորժված հնամաշ ջեջիմի մեջ, վրայից մի թոկով ամուր կապեց ու մի կողմ դրեց. հետո՝ այն իրերը, վոր նա իր հետ չպիտի վերցնեք, կարգավորեց, չաշնի թվանգը խնամքով սրբեց ու կախեց պատից, վորսորդական գեղեցիկ փարդան փաթաթեց, մեք մնդուկը դրեց:

Դրսում ուշ աշնան ցրտաշունչ քամին սուրում եր, սուլում, մերկացնում եր գյուղամիջի այգիների ծառերն ու, կարձես, չարախնդորեն ծիծաղում եր ծառերի մերկութ՜յան վրա, իսկ ծառերը որորվելով հեծկաում ելին դրսում. ահա թափով խփվում ե խրճիթի պատուհանների, ու պատուհանների փակցրած, արզին դեղնած ու չորացած թղթի թերթիկները ճաճաում



8668-53

են քամու անեղ շնչից: Թ՛վում էր թե կպատու-
վեն հիմի, ու խրճիթը քամու սառչ շնչով կլցվի:
Խրճիթի մեջտեղում դրված էր քուրսին,
վորի վրա փռված էր բավականին մեծ մի վեր-
մակ. իրար դեմ ու դեմ նստած ելին Պետրոսի
ծեր հայրն ու պառավ մայրը. հայրը գլուխը
քաշ արած, մտքերի մեջ խորասուզված ծխում
էր, իսկ մայրը ձեռքերը ծալած կուշ էր չեկել
քուրսու տակ ու մտածում էր. նրանք չերկուսն
էլ լուռ ելին. ո՞վ գիտի ինչպիսի մտքեր ելին
անցնում նրանց գլխում:

Պետրոսը մրսում էր. նա մոտեցավ բուր-
սուն, վտաքերը մեկնեց քուրսու տակ ու սկսեց
տաքանալ. նրա գեղջկական դեմքի վրա նշմար-
վում էր ինչ-վոր ափսոսանք, կարծես ինչ-վոր
մի բանի ափսոսում էր նա. նա հազիվ տասնութ
տարեկան կլիներ. նրա սև հոնքերի տակից բաց
ու խուփ ելին անում սև աչքերն, ու նա մտա-
ծում էր:

Հայրը, Ասատուր ապերը, շարունակում էր
ծխել. վերջին խոր շունչը քաշելուց հետո նա
խզեց խրճիթի ընդհանուր լուռ թյունը, հանդարտ
ու մեղմ ձայնով դիմելով վորդուն.

— Հիմա գնում ես ելի, այ՛ վորդի. գնա,
թող տերը բարին տա. գնա, բալթի թե մարդ
գառնաս, ու մենք էլ քո շվաքի տակ ապրենք.

Ֆամա մուղաթ կաց, բալա ջան, ջահել ես, նա-
հախ խաթեք շատ կան քաղաքումը. քաղաքում
դարդ ու բալա շատ կա. մուղաթ կաց, վոր վոտդ
քարի չգա, դեհ, ինչ ասեմ, վորդի ջան, աչքիս
սև ու սպիտակը դուն ես. ես անել որերիս
ըմուգս դու չես, ընենց արա, վոր...

Ու նրա աչքերը արցունքով լցվեցին, ձայնը
նվաղեց, չիբուխը բերնին դրեց ու ագահորեն
միքանի շունչ ծուխ ներս քաշեց, կարծես ու-
զում էր ծխով խեղդել զգացմունքների հորդու-
թյունը:

Մոր, Շուշանի աչքերից չերկու կաթիլ ար-
ցունք գլորվեցին նրա կնճիռներով ծածկված
այտերի վրա: Պետրոսը լուռ էր—նա գլուխը
քաշ արած՝ կրճոտում էր շրթունքներն ու զրս-
պում էր իրեն:

— Շուա-շուա գիր կղրկես, բալա ջան,—
լացակումած շարունակեց մայրը Ասատուր ապոր
խոսակցությունը.— գու գիտես, ելի, վոր սիրտս
չի համբերի. վոր իրիկունը քիչ ուշ ելիր տուն
դալիս, չերկմիտ ելի մնում. ճուտը կորցրած հա-
վի պես պես ու դեն ելի ընկնում. հիմա ինչ
կլինի ճարս, վոր ամիսներով վորդուս չերեսը
չտեսնեմ. քուն կգա աչքերիս. ո՞՞՞ կծածի աչ-
քերին քուն կգա, համա իմ աչքերին չե. գոնե
նամակը առատ արա, վոր դադար առնեմ, սիր-

ալս հանգիստ մնա. մեղք եմ բալա, ջան. վրա-
քիս մեկն աշխարհումն ա, մեկը գերեզմանում.
ենպես արա, վոր յերկմիտ չմեռնեմ, դու գաս,
քու ձեռներով աչքերս փակես ու նոր տանես,
հողին հանձնես, վոր ջանս զինջանա:

Պետրոսը լուռ լսում եր. նրա սիրտը կտրրա-
վում եր. կարծես մոր ամեն մի խոսքը նրա
սրտի յարերին եր կպչում. բայց նա զսպում եր
իրեն, աշխատում եր սիրտ տալ նրան, խոստա-
նալով շուտ-շուտ նամակ գոել ու յերբեմն-յեր-
բեմն արձակուրդներին զգովելով տուն գալ:

Յերբ Պետրոսը տասներեք-տասնչորս տա-
րեկան պատանի չեր, նրա ամենասիրած զվար-
ճութունը վորսի գնալն եր. տանը մի չաշնի
հրացան ունեյին. Պետրոսի աղաչանքով հայրը՝
մինուճար վորդու խաթրը չկոտրելու համար՝
նորոգել տվեց, մայրը կարեց նրա համար վորսոր-
դական մի փարգա, ու նա իր ազատ ժամերին,
դպրոցից վերադառնալուց հետո, կաքավավորսի
չեր գնում: Պետրոսին հաճույք եր պատճառում,
չերբ վորսորդական փարդալի յետևը մտած,
հրացանով նշան բռնած՝ դիտում եր կաքափնե-
րին, իսկ վերջիններս հմայված փարդալի գու-
նագեղութունից՝ ավելի ևս մոտենում ելին
նրան. ավելի մեծ եր լինում հաճույքը, չերբ
հրացանի չաշնիներից վորևե մեկն անվրեպ

կերպով կպչում եր նշանակետին, ու կաքավը
թպրտում եր կանաչների մեջ:

Շարքային կոմյերիտական եր նա, չերբ չեր-
կու տարի առաջ՝ վերջացրեց գյուղական դրպ-
րոցը, բայց, շնորհիվ նրա ցույց տված տաք վե-
րաբերմունքին դեպի գյուղի կոմյերիտական
կազմակերպութունը, Պետրոսը կամաց-կամաց
առաջ գնաց վորպես ավելի գործունյա և աչքի
ընկնող կոմյերիտական: Գյուղական դպրոցն ա-
վարտելուց հետո, նա իրեն նվիրեց ընթերցա-
նության. կարդում եր կենտրոնից լեկած գրքե-
րըն ու լրագրերը, աշխատում եր վորքան կա-
րելի չե լավ հասկանալ, չիմացածների մասին
հարցնում եր իմացողներից և միևնույն ժամա-
նակ մասնակցում գյուղում կատարվող աշխա-
տանքներին: Կարճ ժամանակում նա այնքան ա-
ռաջ գնաց, վոր վերջին տարին նա ընտրվեց
գյուղի կոմյերիտմիության բջիջի քարտուղար.
Իսկ այս տարի արդեն, կենտրոնի կարգադրու-
թյամբ, իր ընկերոջ՝ Սիրաքի հետ միասին, պլտի
քաղաք գնա, կուսակցական դպրոցում սովորե-
լու համար: Կենտրոնի այս կարգադրութունը
շատ ուրախացրեց Պետրոսին, սակայն չերբ գնա-
լու օրերը մոտեցան, նրան հուզում եր մի ու-
րիշ խնդիր. մի բան կարծես թե ուզում եր խեղ-
դել նրա այդ ուրախութունը հիմա, չերբ արդեն

կապոտել եր իրերն ու իրենց քուրսու տակ
նստած լսում եր ծնողների սրտառուչ խրատները:

Ասատուր ապերը ննջում եր իր նստած
տեղը ու մեկ-մեկ, ո՞վ իմանա ինչու, վեր եր
թռչում քնի մեջ. մայրը շարունակում եր ձեռ-
քերը ծալած նստել, իսկ փոքրիկ լամպի զրժ-
պունջ բոցը չեբերվում եր քամուներս թափան-
ցող հոսանքի առաջ ու ծխում եր, սևացնելով
խրճիթի առանց այն ել սևացած պատերը:

Քիչ հետո Շուշանը հառաչելով վեր բար-
ձրացավ տեղից՝ քնելու պատրաստութուն տես-
նելու. նրա վտանները չեբկար նստելուց թմբել
եյին. նա փռեց տեղաշորերը ու մոտենալով
մարդուն՝ բրդեց.

— Վեր կաց, այ մարդ, վեր կաց, տեղդ
մտի՛ չմրսես:

Ասատուր ապերը վեր կացավ հորանջելով
ու ճակատը շփելով մտակեցավ անկողնին:

Ունևոր գյուղացի չեր առաջ Ասատուր ա-
պերը, բայց վերջին տարիների կռիվների ըն-
թացքում նա կորցրել եր իր ամբողջ ունեց-
վածքը. չեղած-չեղածը կորցնելուց հետո նա իր
հույսը դրել եր ավերված Չաղացի վրա և ամեն
տարի ձմեռը մտածում եր, վոր գարունը բաց-
վելուն պես մի կերպ նորոգի Չաղացն ու գրա-
նով գլուխ պահի. բայց միքանի ձմեռներ ու

գարուններ անցան, սակայն Ասատուր ապոր Չա-
ղացը չշինվեց, մինչև հեղափոխութունը վրա
հասավ, գյուղի խորհուրդը նորոգել տվեց այդ
Չաղացը, Ասատուր ապորն ել դրեց Չաղացի
վրա, տարեկան վորոշ վարձ նշանակեց, վոր Ա-
սատուր ապերը ստանա և դրանով իր ընտանի-
քը կառավարի: Այդ որվանից Ասատուր ապոր
Չաղացը կոչվեց «կոմունալ Չաղաց», բայց գյու-
ղացիք գյուրությամբ արտասանելու համար կո-
չում եյին նրան «կոմունի Չաղաց»:

Պետրոսն ել պառկեց քնելու, լամպի աղոտ
լույսը մարեց խրճիթում. լուսնի կաթնագույն
ձառագայթներն ընկել եյին Պետրոսի անկողնի
վրա, իսկ գրսում ցրտաշունչ բամին վռնում
եր ու թափով խփվում խրճիթի դռներին ու
պատուհաններին:

Պետրոսը պառկած տեղը շուռ ու մուռ եր
գալիս, նրա քունը չեր տանում. հազար ու մի
մտքեր եյին ամբողջել նրա գլխում ու տանջում
եյին նրան. նա հիշում եր անցած որերը, վառ-
վրուռն, պատանեկան չեթազներով լի որերը, վո-
րոնք այնքան խորը տպավորութուն եյին թողել
նրա կյանքի ու հոգու վրա. հիշում եր գյուղից
հեռու, այն գեղեցիկ ձորը, ուր քարքարոտ ժայ-
ռերի փեշերին փարթամորեն տարածված եր
ծառերի, ծաղիկների ու կանաչի խորունկ մի

աշխարհ, ուր թուշուններն ելին ապրում ու գեղ-
գեղում, ուր միջատներն ելին ճտճտում ամեն
մի տերևի ու ծաղկի արանքում, ուր սողուն-
ներն ելին տաքանում ձորափի արևակող ու չոր
ժայռերի վրա: Ահա ինքը պատանեկական յեռան-
դով լի քայլում է այդ ձորով, նրա ուսին է չաշնի
հրացանն ու ձեռքին վորսորդական փարդան.
զգում է կանաչի թարմությունն ու բույրը,
լսում է կաքափների կղկղոցն ու զգուշությամբ
առաջ քայլում: Ահա նրանք կտրտում են կանա-
չը դիմացի աղբյուրի շուրջը. Պետրոսը հրացա-
նով նշան բռնած դիտում է վորսորդական փար-
դայի յետևից, տեսնում է, թե ինչպես կա-
քափները հմայվում են փարդայի գունագեղու-
թյունից և առաջ են գալիս. ահա նրանք ավելի
յեն մոտենում, ել ավելի, ու ինքը քաշում է հան-
կարծ հրացանի վոտը, ու նրանցից մեկը թպրը-
տում է կանաչուտի մեջ:

Պետրոսը սթափվում է հանկարծ, նորից
շուռ է գալիս տեղի մեջ, իսկ լուսնի շողերը
քաշվում են նրա տեղաշորերի վրայից, ու լուսի-
նը դանդաղորեն մտնում է ամպերի տակ:

Վաղ առավոտյան Պետրոսը պիտի Սիրաքի
հետ ճամպա ընկնի դեպի քաղաք. նրանց ճամպու-
կընեն գյուղի կոմյերիտականները, չերեի Սիրա-
նըն ել նրանց մեջ կլինի: Գեղեցիկ աղջիկ է

Սիրանը. նա գյուղի աղջիկների մեջ ամենագե-
ղեցիկն է. Պետրոսը վաղուց է այդ վորոշել և
դրա համար ել շատ է սիրում Սիրանին: Ելի
մի աշնանային որ եր, չերբ նա առաջին անգամ
զգաց այդ:

Պետրոսն այդ թագուն եր պահում, վոչ-
վոք չգիտեր այդ մասին. նա իրեն բավարարված
ու չերջանիկ եր զգում, չերբ մեկ-մեկ հանդի-
պում եր նրան ու խոսում նրա հետ. բայց այժմ
նա այդ հաճույքից ել պիտի զրկվի, ու հենց այդ
հանգամանքն եր, վոր խորը տխրության մեջ եր
զցել նրան, ու նա աղոտ կերպով նուջնիսկ մտա-
ծում եր դեմ լինել կենտրոնից չեկած հրահան-
գին, թողնել կոմյերիտմիությունն ու կուսակցա-
կան դպրոց գնալու միտքը և մնալ գյուղում:
Բայց սովորելն ու իրենց գյուղին ու հասարակու-
թյան համար պիտանի մարդ լինելու ձգտումը
նույնքան մեծ հաճույք եր պատճառում Պետրո-
սին: Ուստի նա վճռեց գնալ կուսակցական
Գպրոց:

Յերկար մտածմունքները հոգնեցրին նրա
միտքը, ու քուն իջավ աչքերին: Քամին դադա-
րել եր, իսկ լուսինը կրկին զուրս եր չեկել ամ-
պերի տակից ու լուսով վողողել նրանց խրճի-
թի խավարը:

Վաղ առաժամատ է, արևը դեռ չի ծագել. մի սալ պատրաստ սպասում է Աբրոյի կալում. նրա շուրջը հավաքված են միքանի ջահել-շուհուլ. Սիրաքը վաղուց եղտեղ եր արդեն. Սիրաքի հետ յեկել են նաև նրա ծնողներն ու բուլբերը. մայրը անվերջ խրատներ եր կարդում, վորդուն, վոր իրեն լավ պահի, չմբսի, չհիվանդանա, նամակ շուտ-շուտ գրի:

Բավական թվով կոմյերիտականներ ելին հավաքվել այդտեղ, չերը Պետրոսն ել յեկավ իր ծնողների հետ միասին: Պետրոսն ու Սիրաքը իրենց իրերը տեղավորեցին սալի մեջ ու սկսեցին մնաա բարև ասել ընկերներին, ծնողներին ու բարեկամներին. Սիրանն այդտեղ չեր. չերկու մայրերն արցունքներն աչքերին համբուրեցին իրենց զավակների թշերը. Պետրոսի հայրն ել իր գողգոշուն շրթունքը հպեց Պետրոսի ճակատին ու բարի ճանապարհ մաղթեց:

Սալը ճոնչալով առաջ շարժվեց, նրան հետևեցին Պետրոսն ու Սիրաքը. իսկ նրանց չետևից ել կոմյերիտականների մի խումբ, վոր Պետրոսին ու Սիրաքին տանում եր գյուղից դուրս ճամպու գցելու:

Աբրոյի կալում Պետրոսի ու Սիրաքի ծնող-

ները դեռ չերկար ժամանակ աչքով ճամպու ելին գնում նրանց, սալի չետևից բարձրացող վոշին մերթ ընդ մերթ անտեսանելի չեր դարձնում սալը. նրանք կամաց-կամաց անհետացան, աչևս վոշինչ չեր չերևում, ուստի ծնողներն ել ցրվեցին իրենց տները:

Գյուղից դուրս, մի ցածրիկ բլրի վրա, Պետրոսն ու Սիրաքը մի անգամ ել սեղմեցին ընկերների ձեռներն ու բաժանվեցին նրանցից: Արևն արդեն ծագելու վրա չեր, ամպերը կարմրել ելին արդեն, չերը բավականին հեռացել ելին գյուղից, ու գյուղն աչևս չեր չերևում:

Պետրոսն ու Սիրաքը դեռ շարունակում ելին վոտքով հետևել ճոնչացող սալին. նրանք խոսում ելին իրար հետ զանազան բաների մասին: Խոսում ելին իրենց գյուղի անցուդարձից, գյուղի ցավերից ու կոմյերիտմիությունից:

Ճանապարհը ձգվում եր գեղեցիկ մի հովիտի միջով, նրա չերկու կողմերից ընկած եր փշատի ծառերի մի չերկար շարան. ծառերի ճյուղերն իրար վրա գալով՝ իրենց շվաքի տակ ելին առել այդ ճանապարհը, վոր հաճելի չեր իր անգորրությամբ: Սալն ել կարծես հանգստացել եր այդ փշատների հովանու տակ ու գրեթե չեր ճոնչում:

Պետրոսն ու Սիրաքը լուել ելին արդեն,

խուլ մրմունջով լսվում եր միայն մոտակա աղբուրի փոքրիկ կոհակների ձայնը, վորոնք խառնելում եյին իրար, կազմելով մի վտիտ առվակ, վոր հոսում, գնում եր դեպի մոտակա բոստանները:

Փշատիները սովերը կամաց-կամաց չքանում եր, ու սայլը դուրս եր գալիս մի չոր տարածութուն, ուր ճանապարհի յերկու կողմերում փոված եյին հնձած արտեր:

Արևն արդեն բավական բարձրացել եր, ու իր աշնանային գունաթափ ու անգոր ճառագայթները կարծես ճիգ եյին թափում կենդանութուն պարգևելու մեռած անաղմուկ դաշտերին:

Սիրաքը բարձրացել ու տեղավորվել եր սայլի վրա ու հանդարտ զրույց եր անում սալապան Գևորի հետ. իսկ Պետրոսը գլուխը կախ, մտազբաղ շարունակում եր գնալ սայլի յետևից, Հեռվում աղոտ կերպով նշմարվում եյին միքանի գյուղեր, վորոնց հողաշեն խրճիթների յերգիկներից բարձրանում եյին ծխի կապույտ քուլաները:

Քիչ հետո Պետրոսն ել բարձրացավ սայլի վրա ու տեղավորվեց Սիրաքի դիմացը: Սալապան Գևորը հանդարտ պատմում եր իր գլխով անցած փորձանքներից ու իր կյանքում անցկացրած տանջանքի ու զրկանքի որերից:

Յերբ սալապան Գևորը վերջացրեց իր պատմութունը, Սիրաքը գլուխը թափ տվեց ու ասաց.

— Այդպես ես ապրել, բայց քո վորդիները այդպես չեն ապրի, Գևոր. մեր գյուղում սրանից միքանի տարի առաջ մի հավ անգամ չեյիր գտնի, հիմա դու գիտես, թե քանի հարյուր անասուններ կան... դեռ չեմ ասում վոր մարդիկ սոված կոտորվում եյին, իսկ այսօր մարդու պես ապրում են: Հայրս, Գևոր, — շարունակեց նա վոգևորվելով, — գյուղում ամենախեղճ ու ամենաաղքատ մարդն եր. հազիվ եր կարողանում մորըս, ինձ ու քույրերիս ցամաք հացով կշտացնել, ել ուր մնաց մեզ գրել-կարգալ սովորեցնելը. բայց հիմա, վոր հորս ձեռք մի կտոր հող ընկավ, հիմա լավ ենք, ապրում ենք ու չենք տրտնջում. մեզնից հետո այս աշխարհում ապրողներն ավելի լավ կապրեն ու մի որ կտեսնեն, վոր ես մեր յերկրում գուրկ ու մուրկ ապրող չկա:

Սալապան Գևորը լսում եր ու ամեն խոսքից հետո՝ վորպես համաձայնության նշան, գլուխը տմբացնում:

Պետրոսը լուռ եր ու չեր մասնակցում խոսակցության. արևը կամաց-կամաց թեքվում եր դեպի արևմուտք, իսկ հեռվից մշուշի մեջ, այգիներով շրջապատված յերևում եյին քաղաքի բարձր ու սև շենքերը:

Առաջին անգամն էր, Վոր Պետրոսն ու Սիրաբը քաղաք պիտի տեսնելին. չերբ հեռվից նրանք նկատեցին քաղաքի չեկեղեցիների բարձրը գմբեթներն ու շենքերը, անհամբերության մի զգացում տիրեց նրանց:

3.

Առաջին ձյունը չեկավ դեկտեմբերին: Այդ որը գյուղը հագել էր ձյունի ճերմակ վերարկուն. կտուրներն ու հանդերը նիրհում էին կարծես այդ ճերմակ վերմակի տակ, իսկ ազնավները կռավում էին ձյունածածկ ծառերի վրա:

Գյուղի փողոցներում վտանահարված ձյունը դեղնել ու կիսահալ դրությամբ չփչփում էր անցորդների վտանների տակ: Այդ փողոցներից մեկով, վոչխարի մորթուց կարած տաք քուրքը հազին, արեխները պնդացրած, բուրդը կիսով չափ թափած մոթալ փափախը գլխին, դեպի տուն էր քայլում Սիրանի հայր Մաղաբը:

Նա կարծես այդ առավոտ սովորականից ավելի չեռանդով էր քայլում և քայլերի հետ բարձրացնում կիսահալ ու ցեխախառն ձյունի ճլթճլթոցը:

Բախտիդ ակը շուռ ա գալիս, Մաղաբ, գործերդ լավ են գնում, շաղացիդ չարխը ելի

պատու պիտի գա, ամբարներդ պիտի լցվեն ելի, տունդ ընկուզի միջի պես լիքը պիտի լինի, քսակդ պիտի վոսկով լցվի: Ա՛յ գիտի, Մաղաբ, ժամանակով դու հենց եղպես ելիր, համա ֆալանգը տվավ, չեղած-չեղածդ շաղ տվավ, շաղացիդ չախչախը կանգ առավ, տունդ ու շերդ գատարկվեց. վնաս չունի, ենպես ել կլինի, ես պես ել...

Այսպես մտածելով, քայլում էր Մաղաբը և ուրախանում...

Մաղաբը տուն հասավ այն ըոպեյին, չերբ Սիրանն ավելը ձեռին դուրս էր գալի ողաչից:

— Ախչի, կանչիր մորդ ետտեղ, — դիմեց նա Սիրանին ու ինքը ներս մտավ ողան:

Սիրանն ավելը դրավ հաշտի անկյունն ու գնաց մոր մոտ: Մայրը՝ Հերիքնազը թոնրատալը լվացք էր անում. վեր կացավ լվացքի տաշտակի առաջից, սապնոտ ձեռները սրբեց շորի փեշոյ ու գնաց դեպի ողան:

Մաղաբն ողաչի մեջ վեր ու վար էր անում. կնոջը տեսնելուն պես դուռը փակեց ու դարձավ նրան.

— Լսիր, Հերիքնազ, եսոր չերեկոյան զոնախներ պիտի գան. հացի-բանի պատրաստություն կտեսնես. ճերմակ խալերով վոչխարն ել մորթել կտաս. ենպես կանես, վոր ամոթով

1
2
3
4
5
6
7
8



չմնամ գեղականների առաջը. աղջկաս, Սիրանին պիտի նշանեմ ես գիշեր:

— Ո՞ւմ հետ ես նշանում երեխիս, ամարդ,—
զարմացած ու հանկարծակիի լեկած՝ դիմեց նա
մարդուն:

— Չոփուր Ալեքի, — ասաց ու շարունակեց
վեր ու վար անել ողալի մեջ:

Հերիքնագի դեմքը թթվեց, գլխին կարծես
սառը ջուր ածեցին.

— Այ մարդ, ախր մարդ չե՞ս գտել, վոր
Չոփուր Ալեքին աղջիկ ես տալիս. ջահել տղեր-
քը կոտորվե՞լ են, վոր երեխիս եղ մեյմունին ես
ուզում տալ, բա մեղքը չի՞,— հուզմունքով ասաց
Հերիքնագը ու աչքերը լցրեց արցունքով. — բա
յես նեղութունով երեխա մեծացնեմ, վոր վեր-
ջը շուն ու գիլի բաժին դառնա՞. մի անիր եղ
բանը, Մաղաք, մի անիր, մեղք ա երեխեն. —
աղբսում եր Հերիքնագը:

— Դե, կնիկ, հերիքա, լաց ու կոծդ պա-
հիր. — խստությամբ դարձավ կնոջը Մաղաքը. —
ինչ վոր յես քեզ ասում եմ, լսիր ու եղպես
արա. յես իմ բանը լավ գիտեմ, յես կնկա
խելքով գործ բռնող չեմ. Չոփուր Ալեքը,
ճիշտ ա, միքիչ տարիքով ու միքիչ ել դեմ-
քով գեշ մարդ ա, համա փոսկու մեջ լող ա
տալիս. յես իմ երեխիս լավն եմ ուզում, թող

դնա ու խանութի պես ապրի: Դե իրան ել
կհասկացնես, վոր իմանա: Փարնանը մեր ջա-
ղացն ել պիտի բանեցնենք փեսա Ալեքի փողով:

Հերիքնագը ուզում եր նորից առարկել,
բայց նա լավ եր ճանաչում մարդուն. գիտեր,
վոր իր բոլոր աղաչանքները իզուր պիտի անց-
նեն. ու նա լռեց և կոտրած սրտով արցունքնե-
րը շորի փեշով սրբեց, ողալից դուրս լեկավ:

Մաղաքը դեռ շարունակում եր ողալի մեջ
վեր ու վար անել. նրա մտքով հագար ու մի
բան ելին անցնում: Իսկ դրսում ձյունը գալիս
եր ու դիզվում հանդարտ...

եղ գիշեր Առջենց Մաղաքի տանը իրարով
ելին անցել. ծանոթների ու մոտիկ հարևանների
կանաչք ու յերեխաները ոգնում ելին Հերիքնա-
գին. մեկը ջուր եր բերում, մյուսը մեծ ողան
եր կարգի գցում, յերրորդը խոհանոցում կերա-
կրի ամաններն եր սրբում, լվանում կամ կերա-
կրին հետևում. այդ բոլոր աշխատանքների ըն-
թացքում խոսում ելին, կանչում, ծիծաղում,
սենյակից սենյակ, խոհանոցից ցախատուն, շտապ
գնում ելին, գալիս, կերակրի ամանները շրխ-
շրխկացնում, փայտ կոտրում, և եղ բոլորն ի-
րար խառնվելով՝ Առջենց Մաղաքի տանը ստեղծ-
վել եր յեռուն մի աշխատանք:

Միրանը մեջտեղ չէր չերևում. նա թո՛նրա-
տանը, ո՛ջախի կողքին նստած լաց եր լինում,
այն վայրկյանից, չերբ մորից իմացել էր հոր վո-
րոշումը, լալիս եր ու չէր ուզում ամուսնանալ
Չոփուր Ալեքի հետ: Հայրը խրատներ եր կար-
գացել նրա գլխին, աշխատել էր համոզել, բայց
չերբ տեսել էր, վոր բան դուրս չի գալիս, նա-
խատել էր նրան, ասել, վոր կսպանի, կսատկաց-
նի շան նման, յեթե մի անգամ ել կրկնի Միրանն
իր չեմուշումը կամ լացը:

Հերիքնագի սրտով արյուն եր անցնում.
ինչ անի, ո՛ւմ դիմի. ասել է՝ ասածը պետք է
անի. եղպես է նրա մարդը—ինչ վոր ասաց,
այլևս վոչ մի առարկություն չի կարող լինել ու
չերբեք չի կարելի համոզել նրան:

Մեծ ողբայում, փափուկ գոշակի վրա Մաղա-
բը միքանի ազգականների հետ նստած, չիբուխ
եչին ծխում ու սպասում եչին հյուրերին. մեկ-
մեկ Մաղաքը ներս ու դուրս եր անում ու քթի
տակ փնթփնթալով, կրկին ներս գալիս ողան
ու նստում եր տեղը:

Եղ որը ձյունը միքանի անգամ կտրվեց
Միրանի լացի նման ու նորից սկսվեց ու հիմա
թափվում եր անդադար ու ծածկում գյուղը
ձյունի տաք վերմակի տակ:

Ամեն ինչ արդեն կարգի չեր, չերբ դռների

մոտ աղմուկ ու վռանաձայներ լսվեցին. աչդ
նրանք եչին. Մաղաքն ու Հերիքնազը դուրս չե-
կան հյուրերի դեմ. հյուրերը ձյունի մեջ կորել
եչին:

— Ա՛յ, բարձվ, հազար բարին չեկա՞ք,— ներս
հրամցնելով պատասխանեց նրանց բարեխին Մա-
ղաքը:

Հյուրերի մի ահագին բազմություն—մարդ,
կին, չերեխա—ներս եր մանում հերթով. ես
ո՛վ ե—գյուղի բահանան, Չոփուր Ալեքն ու իր
բույրերը. ես ո՛վ ե—մեծ քրոջ մարդը. ես
ո՛վ ե փոքր քրոջ մարդն ու մարդու չեղբոր
կինը. ես՝ փոքր քրոջ կեսուրը, Չոփուր Ալեքի
ընկերները, նրանց կանայք ու չերեխանե-
րը, կանանց չեղբայրներն ու բույրերը, նրանց
հետ կապված մարդկանց մի ահագին բազմու-
թյուն: Բոլորն ել ներս են մանում Մաղաքի
«մեծ ողան» ու շարվում փոված գոշակների
վրա: Ամենից վերջը նվագելով ներս է մանում
իրենց հետ բերած սազանդարի խումբը ու
տեղ է զբաղում դռների մոտ: Հերթով մեջ-
տեղ են գալիս՝ աղլուխները ձեռներին, Չոփուր
Ալեքի բույրերն ու պարում. սկսվում է ծափ,
աղմուկ, հարայ-հրոց, տուշ, ուրախ ու բար-
ձրաձայն բացականչություններ: Եղ բոլոր աղ-
մուկին խառնվում եր նաև զրսում դռների մոտ

հավաքված կանանց ու յերեխաների աղմուկն ու աղաղակը, վորոնք աշխատում էյին մի կերպ ներս խցկվել ու մասնակից լինել եղ խնճուղին: Առջեաց Մաղաքի քեֆին քեֆ չեր հասնի:

Ողաջի վերի գլխում, տեր-հոր ու Մաղաքի մեջ տեղավորվել էր Չոփուր Ալեքը. նրա մեծ քիթը լայնանիստ կերպով փռված էր իր մեծ, տափակ ու չեչոտ գեմքի վրա, իսկ սակավամազ հոնքերի տակից պլպստում էյին նրա փոքրիկ, կլոր, կանաչագույն աչքերը:

Քիչ հետո միքանի տարբեր գույնի չթե սուփրաներ փովեցին կարպետածածկ հատակին, ու յուրաքանչյուր յերկու հոգու մի-մի կերակրի աման շարեցին սուփրի շուրջը: Տեղ չլինելու պատճառով յերեխաներից շատերը տեղավորվեցին սուփրաների վրա և ծալապատիկ հստոտեցին: Մեջտեղ չեկավ համեղ, յուղալի բոգբաշն ու տկով գինին, և սկսվեց կերուխումը. բացվեց կենացների մի մեծ շարան. հիշեցին գյուղի գալավին ու հին պրիստավին, հիշեցին գզիր Մաթոյին ու տանուտեր Ոհաննես ամուռն, մի խոսքով՝ եղ գիշեր Առջեաց Մաղաքի չորս պատերի արանքում կենդանի ու մեռած շատ գլուխներ անմահացան: Միքանիսը արցունքներով դատարկեցին իրենց բաժակները, միքանիսը հառաչեցին, վոմանք ել լավ որեր մաղթեցին ևն մարդ-

կանց, վորոնք սուփրի շուրջը նստստած, լսում էյին իրենց մասին շուրջ թամաղալի գովասանքները:

Միրանը, հարսներով ու աղջիկներով շրջապատված, կողքի փոքրիկ ողաջում, հագիվ էր զսպում արցունքները.

— Աղջկա որորոցը կտարվի, սև ըլնի էն որը, վոր նա լույս աշխարհ է գալիս. ես ինչ կյանք է, վոր մենք ենք ապրում. տավարի պես պահում, մեծացնում ու տավարի պես ծախում են. մարդկության նշույլ անգամ չկա վրաներս, մենք ինչ մարդ ենք վոր .. Ախ, Միրաք ջան, էն ինչ լավ եյիր խոսում մի անգամ կանանց ժողովում. դու ինչքան լավ ես հասկացել կանանց դրությունը և ինչքան լավ ես ճանաչում գյուղի բռի սղամարդկանց, վորոնք հարամ են անում մեր կյանքը մեր գլխին: Յերանի չեր, բոլոր սղամարդիկ քեզ նման լինեյին. Միրաք ջան, ախր ո՞ւր գնացիր, ախր թե դու եստեղ լինեյիր, գուցե դրությունս եսպես չլիներ. ել չեյի պահի, կգալի, վոտներդ կընկնեյի, կաղաչեյի, վոր բախտըս կապեյիր բախտիդ հետ, չես ել քո շվաքի տակ աճեյի, ծաղկեյի ու ես որին չմնայի...
Շրթունքները վճելով մտածում էր Միրանը ու հիշում էր էն գեղեցիկ որերը, չերբ սիրո առաջին գգացմունքները նոր բացվող գարնան

ճնծադրիկները պես զուգեցին նրա հոգին: Ու
ցավում էր, վոր իր այդ զգացումները չի հայտ-
նել Սիրաքին:

Սիրանի ընկերուհիներն աշխատում էլին
համոզել նրան. ամուսնացածները պնդում էլին,
վոր իրենք էլ առաջ իրենց ամուսիններին չեն
սիրել, բայց հետո հարմարվել են ու մինչև հի-
մա չել հաշտ ու խաղաղ ապրում են: Այդ բոլոր
հորդորները Սիրանի համար վոչ մի նշանակու-
թյուն չունեցին, սակայն խստասիրտ հոր կամ-
քին չէր կարող հակառակել, ուստի նա, չերբ
գլուղի քահանան, տեր-Ոսեփը, նշանադրության
ծեսն էր կատարում, համաձայնվեց գնալ մեծ
ողան, հյուրերի մեջ:

Այդ գիշեր Սիրանին նշանեցին Չոփուր Ա-
լեքի հետ ու վարդեցին ամառը, կալապուխ,
պսակեն նրանց:

Գիշերն արդեն լուսանում էր, չերբ աղմը-
կելով հարբած հյուրերը դուրս չեկան Ղոչենց
Մաղաքի տնից: Ջյունի թղաչափ շերտը տա-
րածվել էր գլուղի վրա և ճոճում էր նրանց
փտաների տակ ու կեղտոտվում. կարծես տրտըն-
ջում էր ձյունը, հուզվում էր՝ ինչպես Սիրանն
այդ գիշերվա նշանադրության ամբողջ ընթաց-
քում:

Քաղաքում Պետրոսն իրեն վորրի պես էր
զգում. նա բոլորից մեկուսացած, ժամերով իր
մտքերին անձնատուր չեղած, քայլում էր հան-
րակացարանի պատշգամբում. ժամերը դանդաղ
էլին անցնում նրա համար. հաճախ նա պարապ-
մունքներից հետո գնում էր քաղաքից քիչ հե-
ռու գանվոյ փոքրիկ գետակի ծառախիտ ափը,
նստում էր մի քարի վրա ու դիտում էր փըր-
փըրալից գետակը, վորն իր սրտի պես հուզված,
ալիքներն ափի քարերովը էր տայիս, կարծես
ուզում էր դուրս գալ ափերից ու տարածվեք...
Այդ ալիքների մեջ Պետրոսն իր սրտի հուզում-
ներն, իր ամբողջ գառնությունն ու թախիծն էր
տեսնում:

Սիրանի պատկերը զրեթե ամեն ըոպե նրա
տաքերի առաջն էր. ամեն տեղ նրա ձայնն էր
լսվում կարծես, նրա ծիծաղն էր հնչում ամեն
տեղ: Յերբ որը չերեկոյանում էր, չերբ արեւը
զուգում էր ամպերն արևմուտքում, Պետրոսն
ակնապիշ հայացքով դիտում էր գեղեցիկ վեր-
ջալույսը, վորի գունատ ճառագայթները սահե-
լով կիսամերկ ծառերի ու դեղնած տերևների
վրայից, փոքրիկ ու դեղին տերևիկների դողդո-
ջուն ու արտացոլված պատկերներ էլին բերում

Պետրոսի համար, վորոնք միանալով իրար, կերպարանում ելին նրա առաջ Սիրանի գեղեցիկ պատկերը: Իսկ յերբ հանդարտ իջնում եր յերեկոն, ու մութը կապույտ ծխի պես տարածվում եր քաղաքի վրա, ու հեռվից յերևում ելին քաղաքի գեղեցիկ լուսերը, նա քալերն ուղղում եր դեպի տուն, դեպի հանրակացարան, ուր ձանձրուլթը կարծես խեղդում եր նրան:

Մի տոն որվա առավոտ, յերբ կուսակցական դպրոցում պարապմունք չկար, մի գյուղացի կուսակցական դպրոցի հանրակացարանն եր վորոնում: Նա նամակ եր բերել գյուղից. Միրաբ Մարգոյանին պիտի տար. քաղաքում մի քանի մարդու հարցուփորձ արավ, սակայն վոչվոր նրան վորոշ կերպով ցույց չտվեց հանրակացարանը. վերջը մի պատանի պիտներ ուղեկցեց նրան դեպի կուսակցական դպրոցի հանրակացարանը:

Հունվարի ցուրտ առավոտներից մեկն եր. մոխրագույն ամպերի վրանը փովել եր քաղաքի վրա:

Յերբ նրանք մոտեցան դպրոցի հանրակացարանի դռանը, պիտները մատով ցույց տվեց գյուղացուն զիմացի պատշգամբը և ասաց, վոր

բարձրանա այնտեղ ու հորցնի իր ուղած մարդուն:

Գյուղացին ներս մտավ բակ և անվստահ քալերով զիմեց դեպի պատշգամբը, իսկ պիտները թռչկոտելով հեռացավ այգտեղից:

Կուսակցական դպրոցի ուսանողներից շատերն այդ առավոտ դեռ իրենց սենյակներումն ելին. նրանցից մեկը պատուհանից տեսավ սանդուղքներից վեր բարձրացող գյուղացուն և զուրս չեկավ դռների մոտ:

— Ի՞նչ ես ուզում, բիձա,— զիմեց նա գլուղացուն:

— Գյուղից թուղթ եմ բերել, քե մատաղ, մարդու պիտի տամ. պատասխանեց նա, ծոցից մի նամակ հանելով:

Ուսանողը կարգաց ծլարի յերեսը, շուռ ու մուռ տվավ ձեռքին, քիչ մտածեց և ասաց, վոր միքիչ սպասի, իսկ ինքը քալերն ուղեց դեպի հանրակացարանի սենյակներից մեկը:

Քիչ հետո դուռը նորից բացվեց, ու զուրս չեկան յերկու յերիտասարդներ: Գյուղացին ձանաչեց նրանց. նրանցից մեկը Սիրաբն եր, մյուսը Ասատուրի տղա Պետրոսը:

— Բարև, Գիքոր ամի, բարև, — ժպիտով բարևեցին նրան Պետրոսն ու Սիրաբը — ես վոնց ես գտել մեր տեղը, Գիքոր ամի, շատ ես ման չեկել, հա...

— Ծանօ, քե մատաղ, վերջը մի պուճուր տղա բերեց եստեղ:

— Դեհ արի, արի գնանք ներս, քիչ տաքացի ու աստ տեսնենք՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա գլուղում, — ասաց Սիրաքը ու ձեռքը Գիքոր ամուսնեջքին գնելով, տարավ նրան սենյակ. Պետրոսն ել նրանց հետ սենյակ մտավ:

Յերբ արդեն նրանք տաք սենյակում, վառարանի շուրջը նստել ելին, Պետրոսն ու Սիրաքը հարցուփորձ ելին անում Գիքոր ամուսն, իսկ Գիքոր ամին պատմում եր նրանց գլուղի խեր ու շառից:

Գիքոր ամին իր գրուցի մեջ ասաց, վոր նրանց քաղաք գալուց հետո Բոյաշոնց մարազը կրակ ընկավ վառվեց, Բաբիենց Մաքոյի ձին սատկեց, խեղճը մնացել է շվար, Մաղաքի աղջկանը նշանեցին Չոփուր Ալեքի հետ և այսպես շատ բաներ: Վերջում ել ավելացրեց, վոր նամակը Սիրաքի քույրը՝ Նազոն է տվել. իր՛նք ել վողջ և առողջ են:

Պետրոսի գուշնը թռել եր. նա սենյակում չկարողանալով համբերել, գուրս գնաց պատըզգամբ: Արցունքները խեղդում ելին նրան, բայց նա գոպեց:

Դրոտում ձյունը թափվում եր նորից խոշոր փաթիլներով. Պետրոսը հենվել եր պատշգամբի

սյունին ու հայացքը հառած բակի ձյունածածկ ուռենուն, մտածում եր:

— Մնաս բարով, Պետո ջան:

Պետրոսը ցնցվեց շուռ չեկավ. Գիքոր ամին եր:

— Կերևա, վոր դարիբուժյուն էս քաշում. բալա ջան, լավ չի, քե մատաղ, սիրտդ ուրախ պահի:

— Գնաս բալի, Գիքոր ամի, — ասաց Պետրոսն ու սեղմեց գլուղացու չորացած ձեռքը, — Բարով տար մերոնց:

Պետրոսն ու Սիրաքը Գիքոր ամուսն մինչև բակի դուռը ճամպու գցեցին ու վերադարձան սենյակ:

Սենյակում Սիրաքը բաց արեց նամակը և շատ զարմացավ, չերբ տեսավ, վոր նամակը Սիրանն է գրել: Սիրաքը բոլորովին այդպիսի նամակի չեր սպասում. միքանի անգամ ծրարի չերեսը շուռումուռ տվեց, մտածելով, վոր գուցե իրեն չի գրված այդ նամակը. բայց չե, Սիրաքը պարզ կարդում եր ծրարի չերեսը՝ «նամակս հասնի Սիրաք Մարգոյանցին, Բաղաֆն Յերեվան»:

— Պետրոս, — դարձավ նրան Սիրաքը:

Պետրոսը չլսեց:

— Պետրոս, գիտե՞ս ով է գրել նամակը, — քիչ ավելի բարձր ձայնով կրկնեց նա:

— Ո՞վ...

— Դոչէնց Սիրանը:

— Դոչէնց Սիրանը, — զարմացած գոչ է ց Պետրոսը ու վազեց դէպի նա. կարծես ուզում էր հափշտակել Սիրաքի ձեռքից նամակը:

— Սպասիր, տո՛ւ, ի՞նչ ձեռ ու վոտ ըն՛կար. ա՛ռ, առ կարգա:

Պետրոսը գրեթէ նամակը խլեց: Նրա դեմքն այլապէս էր, շրթունքները դողում էին. նա սկսեց կարդալ. նրա ձայնը յերբերվում էր, ու կարծես ձայնի թրթիռները դժվարութեամբ էին գուրս գալիս կոկորդից:

Նամակի ընթերցումից հետո Պետրոսը բարձր ձայնով հեկեկաց ու ընկավ անկողնի վրա:

— Ի՞նչ պատահեց քեզ, Պետրոս, ինչի՞ յես լաց լինում. ի՞նչ կար եզտ՛ դ գրած. տո վեր կաց, ամոթ է, ամոթ...

— Թող, Սիրաք, թող, յես կորած տղա յեմ. յես անպետք եմ, յես աւժանի չեմ ապրելու այլևս... — հեկեկանքի հետ իրար յետեից գուրս էին թափվում խոսքերը, վորոնք այնքան դառնութեամբ ու հիասթափութեամբ էին հնչում: Սիրաքը ամեն ինչ հասկացել էր արդեն:

— Պետրոս, յես կողեկի աւժեք չեմ տալիս այդ նամակին, յես չեմ սիրում Սիրանին.

միայն ցավում եմ, վոր հայրը նրան դժբախտութեան դուռն է հասցրել:

Պետրոսը Սիրաքի հարցոյներով պահ մի հանդարտվեց: Նրա այտերն այրվում էին կարծես, ու արցունքոտ աչքերը կարմրել էին:

— Առավոտյան յես կգնամ, Սիրաք, գչո՛ւղ կգնամ, այլևս յես համբերողը չեմ. կթողնեմ դպրոց ու քաղաք և գչուղ կգնամ:

— Հո չե՞ս գժվել, Պետրոս, ի՞նչ ես ասում, ուզում ես կորցնել քեզ, ուզում ես պոկվել այն թանգագին շղթայից, վորով դու կապված ես. կյանքից յետ մնալ, գնալ մի աղջկա յետևից... Լավ չէ, Պետրոս, յերբ ել ուզես, Սիրանի նման մի աղջիկ կգտնես. լավ չէ. ժամանակ կանցնի, ու կմոռանաս. կավարտենք կուսակցական դպրոցը և մի լավ որ կվերագոնանք մեր գչուղն ու կլծվենք աշխատանքների. քեզ մի կորցնի:

— Չէ, Սիրաք, յես գչուղ պիտի գնամ. ինչ ել ուզում ե լինի. թեկուզ կոմյերիամիութչուսից ել հեռացնեն: Յերանի թե յես սկզբից յեկած չլինելի:

Սիրաքն իզուր էր աշխատում համոզել. Պետրոսը վորոշել էր անպայման գչուղ վերագոնալ:

5.

Յարկու ամիս է Պետրոսն արդեն գչուղումն

ե. նա հեռացել էր կուսակցական գաղտնից՝ առանց վարկե հայտարարութեան ու դիմումի. այդ պատճառով էլ, կոմյերիտմիութեան կենտրոնական կոմիտեն վաղուց արդեն նրան հեռացրել էր կոմյերիտմիութեան շարքերից և այդ մասին գրել էր նրան ու գյուղի կազմակերպութեան:

Այժմ նա կտրված էր գյուղական աշխատանքներից ու գրքերից, վորոնց մի ժամանակ նա նվիրված էր ամբողջովին: Այժմ, հաճախ, գրեթե ամեն օր, նա «կոմունի ջաղացի» առաջ, մի քարի վրա նստած, գլուխը ձեռների մեջ առած, ջրերի աղմուկին էր ակննջ դնում, վորը խառնվելով մոտակա բարդիների խշխշոցին ու նոր բացվող գարնան դուրեկան զեփյուռի սրվսրվոցին, մի ընդհանուր ներդաշնակութուն էր կազմում ու լցնում նրա հոգին:

Գյուղ գալուց հետո նա միջանի անգամ հանդիպել էր Սիրանին, խոսել էր նրա հետ, փրտ էր արել՝ ասել էր նրան այն բոլորը, ինչ վոր զգում է, ինչ վոր ամիսներ շարունակ տանջել, հուզել է նրան և ստիպել է նրան թողնել կուսակցական գաղտնիցն ու վերադառնալ գյուղ, սակայն Սիրանն այդ բոլորը լսել էր միայն լուռութեամբ, կարմրել էր, լցրել էր աչքերն արցունքով ու հեռացել էր. նա գիտեր, վոր իր հայրը Պետրոսի յերեսն անգամ չի ուզում տեսնել, վո-

րովհետև Պետրոսն էր չեղել նրա նեղ որերի պատճառը, վորովհետև Պետրոսն էր նրա չեղած-չեղածը տանուլ տվել. այդ օրը Սիրանն էլ հիշում էր, չերբ հայրը խելքը կորցրածի պես, ընկճված տուն յեկավ և ասաց մորը, վոր հոգերի մեծ մասը խլեցին իր ձեռից և բաժանեցին հողագուրկ գյուղացիներին:

Գյուղում Պետրոսը վոչ մի մխիթարանք չբացավ. քաղաքում նրան թվում էր, վոր նա այնտեղ հանգստութուն կգտնի, սակայն այդ բոլորը միայն թվացին ու անցան. այժմ Պետրոսը կորցրել է այն բոլորը, ինչ վոր կարող էր նրան մխիթարել, սփոփել. կոմյերիտմիութունից հեռացվելուց հետո գյուղի կոմյերիտականները գրեթե նրա յերեսին չեկին նայում, տեղն ընկած դեպքում մեկ-մեկ էլ նրա յերեսովն ելին տալիս, վոր նա վռնդված է կոմյերիտմիութեան շարքերից. իսկ Սիրանին իր համար այլևս կորած էր համարում նա. ինչ կարող էր անել, բանի վոր ամեն ինչ վերջացած է. բացի այդ Սիրանն էլ դրական վերաբերմունք ցույց չէր տալիս նրան:

Պետրոսը մենակ էր զգում իրեն այդ գյուղում. դառն էր նրա դրութունը, մտքերը պատվում ելին նրա գլխում. չգիտեր ինչ աներ, ինչով սփոփեր իրեն ու ամոքեր վշտահար ու

հուսահատ սիրտը. շատ է պատահել, վոր մտածել է մեռնելու մասին, մտածել է վոր գնա, ձորագլխին կանգնի ու հնտեղից նետի իրեն ձորի քարքարուտի վրա ու վերջացնի ամեն ինչ:

Գյուղում շշուկներ ելին պտտում, վոր Ասատուրի տղա Պետրոսը դիվահար է չեղել, այդ պատճառով էլ քաղաքից հեռացրել են նրան, ու նա վոչ մի գործի չի կպչում հիմա. ասում ելին նաև, վոր քաղաքում աչք է գցել մի աղջկա վրա, աղջկա հայրը քաղաքում ծեծել է նրան, ու վտաքով փախել է գյուղ, ճանապարհին նրա չեռևից զևեր են ընկել, ու նա վախից կորցրել է խելքը: Ասում ելին ու վերջում մեղա գալիս ասածուն, խոնարհվում ելին նրա գորության առաջ, վոր նա կարողանում էր իրեն դեմ գնացող մահկանացուներին արժանի պատիժ տալ:

Այս բոլորը Ղոչենց Մաղաքի՝ ականջին էլ հասավ, ու նա ուրախությամբ ու գոհ սրտով էր պատմում իր ընկերների ու ծանոթների շրջանում:

— Լավ է չեղել. բա մենք աստված չունենք, բա մենք աստծու ստեղծած արարածները չենք, բա նրա բոլոր արածներն աստված անպատիժ պիտի թողնե՞ր. — ասում էր ու ձեռքերը չերկիրք մեկնելով ավելացնում. — փառքիդ մեռ-

նեմ, աստված, վոր ինձ դուշմանի սրտով չես անում:

Պետրոսը հաճախ էր հանդիպում Ղոչենց Մաղաքին Չոփուր Ալեքի հետ քչփչալիս: Մի անգամ, չերբ գարունը բացվել էր արգեն, Պետրոսն՝ իր ծանր մտքերից ազատվելու համար, առավ վաղեմի չաշնի հրացանն ու վորսորդական փարդան ու իջավ անտառ. նորից նա զգաց կանաչի թարմությունն ու բույրը, և գրանց հետ պատկերացան նրա աչքի առաջ իր անցած կյանքի գեղեցիկ ու անհոգությամբ լի որելը, վորոնց վաղուց ի վեր մոռացել էր նա, այնպես, ինչպես այն կաքավներին, վորոնք թպրտացել են իր գնդակներից այդ գեղեցիկ, անտառապատ ձուռում:

Այդ ո ը, չերբ Պետրոսն անչնում էր ծառախիտ կածաննե ի գիգգազնե ով, նա ձայներ լսեց. կանգ առավ, ուշադրությամբ դիտեց չորս բոլորը ու տեսավ, վո. քիչ ներքև, սավ՛րախիտ ծառերի շարքի տակ, աղբյուրի գլխին, մի քարի վրա պզգիլ ելին Ղոչենց Մաղաքն ու Չոփուր Ալեքը. նրանք խոսում ելին ինչ-վոր ջաղացի մասին: Պետրոսը թագնվեց ծառերի արանքում ու նստեց. նրանք շարունակում ելին իրենց խոսակցությունը:

— Ալեք, դու չգիտես, նրա տղան վառել

ե ինձ, նրա տղան բալլընիկներ ձեռը տվեց իմ յեղած-չեղածս ու ինձ հացի կարոտ դարձրեց. պետք է մի բան անել, քանդել, անսպասման պետք է բանդել «կոմունի շաղացը», թե չե՞ զուր է, բանի եղ խարաբը կա, մենք ինչքան ել ուզում ես ծախս անենք, մեր շինած շաղացում մենակ իմ ու քու աղունը կաղացվի:— Աշխատում եր համոզել Չոփուր Ալեքին Մաղաքը:

— Իսկ յեթե իմացվի, գիտե՞ս, վոր տարիներով այլուրմեն պիտի գանխտ անենք:— Ասում եր Ալեքը:

— Բան չունե՞ս, այ տղա, ինչ էս խամխամ խոսում, հո յերեխա չես. ենպես կբռնենք գործը, վոր տակը չմնանք. Ասատուրը պետք է հացի կարոտ մնա, պետք է վերջին որով տոպրակն առնի գա իմ դուռը, վորդորմութուն ուզի, ու յես դատարկ ձեռով ճամպու զնեմ, վոր սիրտս հովանա:

Պետրոսը ծառերի արանքում լսում եր. քիչ հետո նրանք վեր կացան ու խոսակցութունը շարունակելով հեռացան. Պետրոսի սիրտը տրաքվում եր. ուզում եր գոռալ, բղավել, հայհոյել նրանց յետևից, հասկացնել նրանց, վոր ինքը լսեց՝ ինչ վոր նրանք խոսեցին, բայց զսպեց իրեն. ինչ աներ՝ գնար տեղեկացնե՞ր գյուղխորհրդին, գյուղի կոմբլիշին, բայց չե՞ վոր դրա-

նով կղժբախտանար, կվշտանար նաև այն աղջիկը, վորի հանդեպ Պետրոսի համար նսեմանում է ամեն ինչ, անգամ իր կյանքը: Չե, Պետրոսն այդ մասին վոչվորի չի ասի, բայց զգուշ կլինի:

Մուսլ էր Պետրոսի դեմքը, յերբ բարձրացավ տեղից. նա փաթաթեց գետնին փռած վորսորդական փարզան, առավ շաշնի հրացանը ու վորոչեց «կոմունի շաղացի» մոտով դեպի տուն գնալ:

Գնում եր Պետրոսն ու մտածում: Մտքերը նրան մինչև քաղաք, մինչև կուսակցական դըպրոցը հասցրին. հիշեց նա այն որը, յերբ գյուղից յեկել եր Գիբոր ամին, այդ բոլորի ընթացքում նրա աչքերի առաջ կանգնած եր Սիրանը, իր գեղեցիկ, գունդգուլն չթե շորը հագին. Սիրանի դեյրան իր գունագեղութամբ վնրքան նման եր իր վորսորդական փարզային:

Հեռվից նա տեսավ «կոմունի շաղացը», ու մի ընպե նրան թվաց, վոր ավերվել է այդ շաղացը, ու հայրը, զզգզված մազերով, արցունքն աչքերին, դագանակին հենված դիտում է այդ ավերակը. Ղոչենց Մաղաքն ու Ալեքը բարձրանում են այդ ավերակի միջից ու դիվային քրքիջով ծիծաղում նրա առաջ:

Միքանի բուպեյից նա արդեն շաղացի առաջն եր:

Ջաղացում ամեն ինչ կարգին եր, շաղացի շախչախը սովորական նվվոցով պտտվում եր, իսկ Չուրը խշշում եր և աղմուկով թափվում վար. հայրը ալրաթաթախ աղունն եր վրա տալիս թիակով. նա չնկատեց Պետրոսին, վորը միքանի բուպե շաղացի առաջ կանգնելուց հետո քայլերն ուղղեց դեպի գյուղ տանող ճանապարհը:

6.

Գյուղում հունձը վերջացել եր արդեն, կալերը զարգարված ելին հնձած հացահատիկների խուրձերի կույտերով. դեպի գյուղ տանող ճանապարհները տնքում ելին բեռնավորված սալերի տակ, վորոնք ճոնչալով շարժվում ելին դեպի կալերն ու մարագները: Գյուղի լավ որերն ելին յեկել:

Ղոչենց Մաղաքն ու Չոփուր Ալեքը վաղուց արդեն շինել ելին իրենց շաղացը ու այժմ հարսանիքի պատրաստություններ ելին տեսնում: Եղ որերին Սիրաքն ել գյուղ եր յեկել՝ ամառային արձակուրդները գյուղում անցկացնելու համար:

Սիրանը միքանի անգամ թագուն հանդիպել

եր Սիրաքին, լաց եր յեղել նրա մոտ, բաց եր արել սիրտը նրա առաջ, աղաչել եր նրան, վոր տանի, հեռացնի իրեն այդ գյուղից:

Սիրաքը զգացել եր նրա դառը դրությունը, աշխատել եր հուսադրել նրան և մի որ անձամբ Մաղաքի մոտ եր գնացել, փորձել եր համոզել, վոր յետ կանգնի իր վճռից, վոր խղճա իր Չահել աղջկան ու Չոփուր Ալեքի ձեռը չգցի: Բայց Սիրաքի հորդորները վոչ մի ազդեցություն չեյին ունեցել Մաղաքի վրա. նա պնդել եր, վոր տղամարդու խոսքը մեկ կլինի, խոսք ե տվել, պիտի կատարի:

Պետրոսը դառը մտքերի մեջ ընկած, ցերեկները թափառում եր անտառում, և յերբ յերեկոն վրա յեր հասնում, յերբ գյուղի լույսերը վառվում ելին, հոտի ու նախրի հետ նա յել գյուղ եր իջնում: Մեկ-մեկ ել, գիշերները, նա գնում եր դեպի «կոմունի շաղացը»՝ տեսնելու հո չեն քանդում շաղացը, և յերբ համոզվում եր, վոր բան չկա, նորից վերադառնում եր գյուղ:

Վերջին որերը Պետրոսը վերին աստիճանի ջղային եր դարձել. Սիրաքի գյուղ գալը նրան անհանգստացնում եր, այդ պատճառով ել նա ամեն կերպ խուսափում եր Սիրաքին հանդիպելուց:

— Ո՞վ իմանա հիմա ինչեր կպատմի Սիրաքն

իր մասին. — մտածում եր նա, ու հիշողութեան մեջ արթնանում ելին այն բոլորը, վոր տեղի ունեցան կուսակցական դպրոցում:

Նա լսել եր, վ ը Սիրաքը գյուղում միքանի ժողովներ ու գրույցներ եր կազմակերպել, վոր կոմյերիաները հարցուվորձ ելին արել և տեղեկացել Սիրաքից կոմյերիտմիութեանից իրեն հեռացնելու մասին. լսել եր նաև, վոր Սիրաքը քաղաքից գյուղի համար մի մեծ գազի լամպ ե բերել, վորը պիտի կախ տան խրճիթ-ընթերցարանի դռան գլխին, վոր ենտեղից տարածվի լուսը գյուղի վրա:

Եդ բոլորը հուզում ելին Պետրոսին, մանավանդ չեբբ մյուս կողմից ել մոտենում ելին Սիրանի հարսանիքի որբերը:

«Ի՞նչ կանի եդ գիշեր Պետրոսը, չեբբ գյուղը կբռնի գուռնի ձենը, չեբբ քեֆի և ուրախութեան մեջ կլինեն նրանք, չեբբ արշուների պես կարմիր գինին կհոսի Ղոչենց Մաղաքի սեղանի վրա ու հետո... հետո հարս կտանեն Սիրանին»: Այս բոլոր մտքերն ուրուրի պեռ պարտվում ելին նրա գլխում, դադար ու հանգստութեան չեյին տալիս նրան: Յերբեմն-չերբեմն նա աշխատում եր մոռանալ, չմտածել վոչնչի մասին, բայց չեբ լինում. մտքերը հախուռն չերաֆներով պտտվում ելին նրա գլխում և խփվում ելին կարծես նրա գանգի պատերին:

Սիրաքի գալուց մի շաբաթ հետո գյուղի խրճիթ-ընթերցարանի դռան գլխին, բարձր մի սյունի վրա կախել ելին գազի լամպը, նրա լիմոնագույն լուսը տարածվել եր գյուղի գետնափոր ու խճաշեն խրճիթների ու ծուռուծուռ նեղլիկ փողոցների վրա: Այդ չերեկո, չեբբ Պետրոսը անտառից բարձրացավ գյուղագլխի բլուրի վրա, նա տեսավ գազի լամպի գեղեցիկ լուսը. նա պահ մի կանգ առավ բլուրի գլխին ու դիտեց գյուղը, վոր վողողվել եր գազի լամպի խաղաղ ճառագայթներով:

7.

Այն գիշեր, չեբբ Ղոչենց Մաղաքի տանը հարսանիք եր ու քեֆ, չեբբ գյուղի փողոցներն ու կտուրները լիքն ելին մանուկներով, հարսներով ու աղջիկներով, գյուղի խրճիթ-ընթերցարանում Սիրաքը հավաքել եր գյուղի կոմյերիտականներին ու ջահելներին և նրանց պատմում եր կոպերատիվ կազմակերպութեաններին նշանակութեան մասին:

Ջրուցը վերջանալուց հետո բոլորը ցրվեցին, ու խրճիթում Սիրաքը մնաց միայն, վոր մնացել եր այդտեղ պարապելու: Դրսից գուռնի և ուրախութեան ձայներ ելին լավում, իսկ Սիրաքը կարգում եր, ու թերթերն իրար չեռակից անցնում ելին, գիշերվա ժամերի նման:

Հանկարծ Միրաքը վոտնաձայներ լսեց ու տեսավ, թե ինչպես խրճիթի պատուհանների առաջից չերկու ստվերներ շտապ անցան դեպի խրճիթի դուռը. քիչ հետո խրճիթի դուռը բացվեց, ու ներս մտան չերկու կոմյերիտականներ. նրանք չերկուան ել հեռում ելին.

— Միրաք... քանդում են... չերկու մարդ քանդում են «կոմունի շաղաքը».— հեալով, գրեթե միասին գոռացին նրանք.— չերք մենք սունն ելինք թեքվում, մենք տեսանք նրանց ..

Միրաքը շտապով ծածկեց գլխարկը և դուրս չեկավ:

— Գնանք,— ասաց նա ու չերկուսով քայլեցին դեպի գյուղխորհրդի նախագահի տունը:

Քիչ հետո Միրաքը գյուղխորհրդի նախագահի ու չերկու միլիցիոնների հետ ձիեր նստած, արշավում ելին դեպի «կոմունի շաղաքը». չերք արդեն նրանք շաղացի մոտ ելին, նկատեցին, վոր մեկը կանգնած է շաղացի կտուրին ու իրենց տեսնելով կուացավ: Գյուղխորհրդի նախագահի կարգադրութչամբ միլիցիոներները միշանի գնդակ արձակեցին. գնդակները վզգալով անցան շաղացի կտուրի վրայով: Միքանի ըոպելից հետո նրանք արդեն շաղացումն ելին: Ջաղացի դռան յետևում պահվել ելին չերկու գյուղացիներ. լուց-

կու ադոտ լուսի տակ Միրաքը նկատեց նրանց մեռելագուլն կերպարանքը:

— Ի՞նչ էք անում եստեղ, ինչի՞ չեք քանդում շաղաքը.— աղաղակեց նրանց վրա գյուղխորհրդի նախագահը:

— Մենք մեղք չունենք, ընկեր նախագահ, մեղքը իմ խաղելին Մաղաքինն ու Չոփուր Ալեքինն է.— համարյա լացակումած ու նվաղած ձայնով պատասխանեց նրանցից մեկը.— նրանք ես գիշեր մեզ տաս-տաս մանեթ խոստացան, վոր քանդենք «կոմունի շաղաքը»:

Կես ժամ անց գյուղխորհրդի նախագահը, Միրաքը և չերկու միլիցիոներ, չերկու գյուղացիների հետ միասին կանգնած ելին Դոչենց Մաղաքի դռանը:

Գյուղը դեռ թնդում էր գոռոնի և ուրախութչան ձայներով: Մաղաքի տանը կերուխումը շարունակվում էր:

Գյուղխորհրդի նախագահը մարդ էր ուղարկել ներս Դոչենց Մաղաքին ու Չոփուր Ալեքին դուրս կանչելու համար: Ներսում սկսվել էր մի անասելի իրարանցում ու աղմուկ: Հյուրերը խմբերով դուրս ելին գալիս դուռը՝ տեսնեն, թե ովքեր են Մաղաքին ու Ալեքին կանչողները:

Մաղաքն ու Ալեքը ուշանում ելին, իսկ նրանք դեռ սպասում ելին Դոչենց Մաղաքի դռան առաջ:

Մեկը գյուղից դուրս քայլում է լեռնային կածաններով. այդ Պետրոսն է, վոր փախել է գյուղից լավոդ ուրախութեան ու հարսանիքի ձայներից: Նա գնում է իր սիրած լեռների գերկը, գնում է սփոփվելու նրանց քար լուռութեան մեջ. գնում է լեռների փեշերից դիտելու այն գեղեցիկ ձորը, վորտեղ նա անդարձորեն կորցրել է իր պատանեկան գեղեցիկ ու անհոգութեամբ լի որերը:

Գյուղից լավոդ ձայները նվազում են հետադեհտե. Պետրոսն արդեն կանգնած է ձորագլխին: Նրա առաջ, լուսնի արծաթագույն ճառագայթներով վողողված նիրհում է գեղեցիկ, անտառապատ ձորը. ձորում ճռիկներն ու գորտերն են յերգում. ել չեն լսվում գյուղից հնչող զուռնայի, դափի և ուրախութեան ձայները. նրանք անզոր են այդ հեռավորութիւնը թափանցելու համար:

Ձորագլխից հեռու մշուշի մեջ յերևում են գյուղի աղոտ լույսերը. այդ լույսերի մեջ նա տեսնում է գազի լամպի գեղեցիկ լույսը, վոր իր խաղաղ ճառագայթները, լուսեղեն վարսերի նման, փռել է գյուղի վրա. այդ ճառագայթները գյուղից հուշեր ու պատկերներ են բերում Պետրոսի համար, նրանք բերել են պանդները Սի-

րանի, վոր դողում է լեռնային ջինջ ողի տարածութեան գրկում, լուսնի ու գազի լամպի ճառագայթների ցանցի մեջ:

Ահա նա հագել է նոր, գույնզգույն գեղեցիկ վարդերով չթե դեյրան ու ծիծաղում է ձորի կանաչուտի մեջ. նրանից քիչ հեռու կարծես ցերեկ լինի. ենտեղ, կչկչան աղբյուրի շուրջը կաքափներ կան, վորոնք կտկտում են կանաչը: մի տղա, Սիրանի շորի պես գույնզգույն վորսորդական փարդան ձեռին, հրացանը նշան բռնած, դիտում է կաքափներին, վորոնք հմայված դեպի փարդան են կաքավում: Վորքան նման է Սիրանի դեյրան իր վորսորդական փարդային:

Սիրանի պատկերը դեռ դողում է ձորի կանաչուտի մեջ, ու Պետրոսը կարծես լսում է նրա հնչուն ծիծաղի ձայնը:

— Յես գալիս եմ, յես ձոր եմ իջնում, Սիրան, յես գալիս եմ գորտերի ու ճռիկների հետքո հարսանիքի տոնը կատարելու. ահա յես... ահա յես... յես գալիս եմ...

Ու գիշերվա լուռութեան մեջ թափով ձորագլխից դեպի ձորն է նետվում մի մարմին ու ջախջախվում գեղեցիկ ձորի քարերի վրա:

Գորտերն ու ճռիկները շարունակում են

չերգել, իսկ լուսինը իր պաղ ու արծաթագույն
ճառագայթներով վողողել եր քարաժայռերն ու
ձորը:

1926 թ. նոյեմբեր.
Յերևան

«ԴՅՈՒԶԲՅԱՆԴԻՆ ՊԱՎԵՍԿԱ ԶԿԱ»...

1.

Ակոփ ամին առավոտը շուտ արթնացավ,
խուրջիններն ուսին գցեց, գլուղամիջի աղբյուրի
դեմ միքանի բուռ սառը ջուր խփեց չերեսին
ու ճամպա ընկավ քաղաք:

Մինչև քաղաք հասնի, արևն ել կծագի, քա-
ղաքի դուքաններն ել կբանան, ձեռաց առու-
տուրը կվերջացնի, մտի նամակն ել յաշնիկը
կգցի ու արևով գլուղ կվերադառնա Ակոփ ամին:

— Այ թե նամակը Բագու հասներ հա՛ —
մտածում եր նա ու, ձեռքի դազանակին ուժ
տալով, քայլում եր հանդարտ: Հեռվում մշուշի
մեջ կորել էին քաղաք տանող վոլորապտույտ
ճամպաները, իսկ գլուղն արդեն արթնացել եր,
ու հորանջի պես ձգվում եր ծուխը ցածրիկ
կառններից չերկինքն ի վեր:

Շատ հոգսերի տեր եր Ակոփ ամին. ինչեր
ասես չի անցել նրա գլխով. ճակատի յուրա-
քանչյուր կնճռի տակ Ակոփ ամին մի դարդ ե

թաղել, մի վիշտ, վոր տարիներ շարունակ կրծու-
տել է նրա սիրտը, հուզել է նրա հոգին:

Զրկանքի ու կարիքի դառնությունն է ծծել
նա, մտրակի հարվածներ է կրել, հազար մար-
դու քթի ջուր է քաշել, թուք ու մուր է կրել,
տարիներով տանջվել է ոտարի դռանը, վոր մի
կտոր-գարի հաց վաստակի ու իր զավակների
առաջ ամոթով ու սևերես չմնա, մեծացնի, հաս-
ցնի, բուսցնի. և մեծացրել է, ամազ է տվել,
արյուն-բրտինքով կերակրել է Ակոփ ամին իր
զավակներին ու սրտի դառը կակիծով ել կորցրել
է նրանց:

Մեծ պատերազմին նրանցից յերկուսին սալ-
դաթ տարան, ու են տանելն եր, ել չեկան. ում
ասես հարց ու փուձ արավ Ակոփ ամին, ում
վոտները չընկավ, չաղաչեց, վոր դրուստ մի
խաբար տան իր վորդիների մասին. բայց հնար
չեղավ. վորդիները չդարձան ու չդարձան. իսկ
փոքր վորդին, Արութիկը վեց ամիս առաջ Բա-
զու գնաց մշակություն անելու, վորպեսզի մի-
քանի մանեթ չես գցի ու մի լուծ չեզ առնի,
վոր մի կտոր հացի տեր ոլնեն, հորն ել ազատի
խալխի դռներից ու տավարի յետևից քաշ գա-
լուց, մորն ել ուրիշների թոնիրների զրաղների
խորովվելուց. եսպես եր մտածել Ակոփ ամու
վորդին ու գնացել եր Բազու մշակություն ա-

նելու, բայց մինչև որս վոչ մի խաբար չեք ա-
րել, վոչ մի դալամ գիր չեք գրել հորը:

Քանի-քանի անգամ Ակոփ ամին խաբար
արեց գեղից գնացողների միջոցով, վոր նամակ
գրի, մի տեղեկություն գրի իր գործից, իր
դրությունից. բայց իզուր. վերջը տեսավ, վոր
ճար չկա, իրիկունը Դավթանց Մոսոյի տղին մի
գիր գրել տվեց իր բերանով, վոր հարևանի վոր-
դու հասցելով զրկի, նա չել Արութիկին տա. ու
հիմա նամակը գոգզված փափախի արանքը դրած,
հարցուր տեղից ու հարցուր գուշնի կարկատա-
նով կարկատած խուրջինն ուսին, հաստ կոպա-
լին ուժ տալով, քայլում եր քաղաք տանող ճա-
նապարհով ու մտածում.

— Այ թե նամակը Բազու հասներ հա...
2.

Ամպերը վարդի գուշն ստացան. քիչ հետո
արևի շողքը քարին դիպավ. Ակոփ ամին արդեն
մոտենում եր քաղաքին. հեռվից նա տեսնում եր
քաղաքի կայարանը ու լսում եր ձեն ձենի տվող
գնացքների սուլոցները:

Յերբ նա քաղաք հասնի, առաջ բազար կը-
մանի, խուրջինի 10 ձուն և 2 ֆունտ կարագը
կծախի, ենտեղից ել բանկոտպի խանութը կգնա,
միքիչ թուփուն ու յերկու գրվանքա չել շաքար

կառնի, մտտի նամակն ել փոստի յաշշիկներէց մեկի մեջ կգցի ու արևով տուն կվերադառնա:

Արևը կամաց-կամաց բարձրանում էր. սուլոցները կարծես մոտենում էին, ու կայարանում յերթեկող գնացքներն ավելի ևս պարզորոշ էին յերևում:

Շուտով նա հասավ կայարան. գնացքը նոր էր յեկել Յերևանից, ու վագոններից իջնող ու տեղ վորոնող ճամպորդներն իրարով էին անցել. քաշքըշում, հրում, գոռում էին նրանք: Նրանցից վոմանք անհոգ զբոսնում էին պլատֆորմի վրա միջանի աղջիկներ, կապոցները ձեռներին, ինչ-վոր մեկին էին վորոնում. գնացքից իջնող մի կնոջ գրկում ճշում էր յերեխան, խկշոգեշարժը սուլում էր, վեր ու վար անում և իրար կցում վագոնները:

Միջանի րոպեից հետո յերկրորդ գանգը հընչեց. վագոնները շարժվեցին իրար յետևից. Ակոփ ամին յերկար նայեց գնացքի յետևից, նայեց ու հառաչելով քայլերն ուղղեց դեպի քաղաք:

3

Քաղաքում կյանքը յեռում էր: Ակոփ ամին մտավ քաղաք ու մի կես ժամ պտտելուց հետո իր ունեցածը ծախեց ու դիմեց դեպի բանկոպի խանութը. խանութը լիքն էր մուշտարի-

ներով. վորը կտոր էր չափել տալիս, մի ուրիշը կոշիկ էր գնում, յերրորդը բրինձ կամ շաքար էր ու գում, մի խոսքով՝ Ակոփ ամին դեռ յերկար պիտի սպասեր, մինչև իր հերթը հասներ, ու նա ռգտվելով պարապուժյունից, դիտում էր շուրջը գտնված իրերն ու մարդկանց:

Հանկարծ Ակոփ ամու աչքն ընկավ պատից քսշ արած յաշշիկն ու մտածեց. վոր լավ յեղավ, եստեղ փոստի յաշշիկը կգցի ու միանգամից կըվերջացնի քաղաքում իր գործը: Իսկույն հանեց փափախը, դուրս հանեց փափախի արանքից ծալված ծրարը, ծնկի վրա դնելով ձեռքով հարթեց ու մոտենալով յաշշիկին, նամակն անցքից ներս գցեց. նամակը հասնելով յաշշիկի հատակին՝ թեթև ձայն հանեց, ու Ակոփ ամին միամտած հեռացավ յաշշիկի մոտից:

Այդ վայրկյանին խանութի աշակերտներից մեկը բոթեց կողքի ընկերոջը և աչքը յաշշիկին ուղղելով փսփսաց.

— Տեսա՞ր, բողբոջավորներից մեկն ել ավելացավ. գործդ բուրդ ա, Սեդրաք, — ասավ ու շարունակեց բրինձ կշռելը:

Կես ժամից հետո Ակոփ ամին քաղաքում իր գործը վերջացրել էր և ուրախ-ուրախ տուն էր վերադառնում:

— Յարաք նամակը պիտի հասնի՞ Բագու-

յարաբ հոյաշչիկի արանքը չմնաց. յարաբ եղ նամակը պիտի կարդամ Արուսթիկը — մամտալով շարունակում եր Ակոփ ամին իր ճամպան ու շոգում արևի տակ:

Նա արդեն դուրս եր չեկել քաղաքից:

Հեռվում մշուշի հետ կորած չերևում եր գյուղը. այ գիտի գյուղ. վնրքան մութ ամպեր են անցել քո գլխով — նայում եր Ակոփ ամին ու շշնջում հառաչելով — քանի՜-քանիսները քո կոկորդից քամած արչան զնով քեֆեր են սարքել, կերել, խմել, հարբել ու իրար կոտորել. իսկ հիմա շունչդ տեղն ա չեկել, ծուխդ դուզա դուրս գալիս չերդիկներիցդ:

Գնում եր ու հիշում եր Ակոփ ամին որերը դստն ու տանջալից, որերը սովի ու մերկության, ալ յուսի ու արցունքի որերը, վորոնք խորը կնիք են դրել իրենց գյուղի ու գյուղացիների, իրենց սարերի ու քարերի վրա:

4.

Յերեկոյան բանկոտալի վարչության նախագահը հավաքել եր բողոքի արկղների մեջ չեղած գրությունները և գրասեղանի առաջ նստած աչքի չեր անցկացնում:

Նրա աչքերը հոգնածությունից տարուբերվում ելին. քունը տանում եր. հանկարծ նրա

աչքին ընկավ ծալծլված մի ծրար. կարգաց ծրարի չերեսը ու հասկանալով բանի էյությունը, ժպտաց ու պատռելով ծրարը, սկսեց կարդալ.

«Միրելի վու դի իմ Արուսթիկ ջան,

«Առաջ-առաջ ընդունիր բարովագիրս, մուդ կողմանե և իմ կողմանե և կհուսանք, վոր դուն ել առողջ կեղնիս և թե մեզնեն կհարցնիս, փառք արարչին, սաղ-սալամաթ ենք. և աբրուստ չկա և կտուրմ հացը ձիավոր ա եղե, մենք փիադա, չենք կրնա գտնի: Բալա ջան, հրես գատկին վեց ամիսը թամմեց, վոր դու գնացել ես, և դեչի որս հեչ խաբար չես երե, վորա մենք ել հանգիստ եղնենք, և մերդ աչքերը քոոցուց լալով, և չես ել շատ չերկմիտ եմ և հազար խիալ-կանցնի գլխովս և դու մեր դարդին հասի:

«Բալա ջան, առավոտնից դեչի իրգուն չես չուրեն ընկած արևի տակ կխորովվիմ, և մերդ խալխի թոնիրների դրաղներին կեփե և չենք կրնա ապրի և մեզ համար մի խորհուրդըմ երա. մե որըմ լացի մեզ համար: Կառավարությունը մեզի չերկու ջանի հող ա տվե. համա չեզը չկա, վոր վար ենենք և սերմ չկա. փարա դրկի ջուխտըմ չեզը առնեմ. հրեն Մանասի թոռ Ավոն իրանց չեզանը ծախի կը և լավ չեզան են և փարա չկա, վոր առնեմ և դու փարա դրկի, վոր փարեն փոշտով չի վերցվի — մարդու ձեռքով կոցցվի կը: Ել ինչ

ասեմ վորդի ջան, դալամը իմ ձեռին չի և չեմ կրնա սրտիս ամեն վորբիսիթունիցը գրեմ քեզի և դուն շուտ շուտ գիր գրի. դու մեզի մի աշե. բարև անեն քեզի հնգերտանքդ Սերգոն ու Ավետիսը. և քեռիդ Սարիբեկը բարև ունի, և մերդ Սալբին թուշդ պագե կը. և մնամ քեզ բարի կամեցող հաչը Ակոփ Բաբայանց»:

Կարդալուց հետո բանկոտպի վարչության նախագահը ծիծաղեց, պատուեց նամակն ու կողքի դամբուղի մեջ գցեց և ծուլ-ծուլ հորանջելով փողոց դուրս չեկավ:

5.

Որերն անցան, գլուղի արտերը բոց քաշեցին, հունձի որերը մոտեցան, բայց Ակոփ ամին իր նամակի պատասխանը չստացավ. սակայն նա ձուլսը չեր կարել. շաբաթը միքանի անգամ գնում էր քաղաք, մտնում էր փոստը և ամեն պատահողից հարցնում.

— Դուզգըջանդին պավեսկա չկա...

Շատերը ժպտում ելին ու անցնում, ուրիշները չլսելու ելին դնում իրենց, իսկ Ակոփ ամին քոռ ու փոշման վերադառնում էր տուն, վիզը ծուռ, ձեռը դատարկ:

Յերկար սպասումները նրան խորը կասկածներ թմեջ գցեցին. նա որեցոր ընկնում էր, նի-

հարում, գիշերները քունը չեր տանում. պառկում էր հագար ու մի մտքերով ու տանջվում էր տեղի մեջ. իսկ յեթե ընում ել էր, աչքը փակվելուն պես վեր էր թռչում տեղից դարհուրած, կրակ անում ու սարսափով պատմում իր կնոջը տեսած յերազը:

Ակոփ ամու կինը, Սալբին, արդեն հալից ընկել էր. նրա համար աշխարհը խավարել էր. նա արդեն անդարձ կորած էր համարում Արուսթիկին, բայց Ակոփ ամու անհանգիստ վիճակը տեսնելով, ցավը ներս էր գցել, ձեն չեր հանում, վորպեսզի նոր դարդ չավելացնի դժբախտ ծերունու առանց այն ել վշտահար սրտին:

Որերը որերի, շաբաթները շաբաթների չետևից անցնում ելին, իսկ կասկածն ու վիշտը ուտում ելին նրանց վայրկյան առ վայրկյան:

— Ո՛վ իմանա՛ ինչ ասես չի կարող պատահել ոտար քաղաքում անփորձ ջահելին. ո՞վ իմանա՛ կենդանի՞ չե, ապրում է նա — մտածում ելին Ակոփ ամին ու Սալբին և չեզրակացնում, վոր յեթե Արուսթիկի գլուխը վրան լիներ, անպայման նամակի պատասխանը կգրեր կամ մի խաբար կաներ:

Ծանոթների և բարեկամների յուրաքանչյուր հարցուփորձը Արուսթիկի մասին նորանոր կասկածների առիթ էր դառնում նրանց համար.

շատ անգամ Ակոփ ամին կամ Սալբին աղաչանքով դիմում ելին հարցուփորձ անողներին, վորպեսզի նրանք առանց թագցնելու ասեն, յեթե վորևէ բան են լսել կամ գիտեն Արութիկի մասին. այդպիսի դեպքերում ծանոթները միջոց չեյին խնայում համոզելու, վոր ի գուր է իրենց անհանգստությունը, և վոր իրենք վոչ մի բան չեն լսել ու չգիտեն այդ մասին:

Մի իրիկուն ել Ակոփ ամին հանդից յերբ տուն վերադարձավ, ուժ չկար վրան՝ վիշտն ու մտածմունքը, ձերությունն ու հոգնածությունը հաղթեցին նրան, և նա անկողին ընկավ: Սալբին մնացել էր շվար. գյուղի բժիշկը չեկավ քննեց և գտավ, վոր ձերության հիվանդություն է, դեղ տվեց ու գնաց:

Հիվանդի զրությունը որեցոր վատանում էր, նա տաքության մեջ խոսում էր յերբեմն. մեկ դաշտում վար էր անում ու չեզնեքի հետ էր խոսում, մեկ քաղաքում էր ու վորևէ խանութում առևտուր էր անում, վորդու հետ էր խոսում, իսկ Սալբին տխուր ու դիակի կերպարանք ստացած՝ նստել էր նրա կողքին և հանդարտ ու վշտոտ հայացքով գիտում էր Ակոփ ամուն:

Վերջին յերեք որը հիվանդի լեզուն կապ ընկավ. նա տանջվում էր արդեն. շնչառությունն

արագացել էր. կիսաբաց աչքերը փոս ելին ընկել, ու նա անճանաչելի չեր դարձել:

Յերրորդ որը յերեկոյանալու վրա չեր, Ակոփ ամին հանգստացավ, շնչառությունը դադարեց, իսկ արևի վերջին ճառագավթները ցածրիկ հյուղի փեղկերի արանքից ներս սահեցին՝ վերջին անգամ համբուրելու Ակոփ ամու դժգուշն ճակատը:

6.

Մի շաբթից հետո, յերբ գյուղում արդեն հունձը վերջացել էր, Սալբին արտերում հասկաքաղ էր անում. ու մեկ ել յերբ կռացած տեղից գլուխը վեր բարձրացրեց, տեսավ հեռվում, լեռների շուրջը պտտվելով իջնում է գնացքը:

Սալբին նայեց գնացքին, ձեռքերը թուլացան, և հավաքած հասկերի փունջը գետնին փռվեց. նրա աչքերն արցունքով լցվեցին, ու նա կարոտով շշնջաց.

— Պոյեզդ, մի որ ել իմ բալաս պիտի բերես յարաբ...
Սյդ միջոցին մի յերիտասարդ գլուխը գրնացքի պտուհանին հենած, կարոտով դիտում էր իրենց գյուղը: Նա գալիս էր մեծ քաղաքից, ուր նա շատ բան էր սովորել. նա այժմ կոմսոմոլ է, ու նրա կապույտ բլուզի դոշին ամրացրած է «Կիւ»:


Յերբ նա գյուղ հասնի, պիտի իր շուրջը հավաքի գյուղի ջահեխներին, պիտի կազմակերպի նրանց, վոր միացյալ ուժով աշխատեն ու գյուղն առաջ տանեն:


Գնացքը վորորվում եր լեռների լանջերով ու առաջ սլանում, իսկ հեռվում, գյուղի ցածրիկ կառույների լերդիկներից բարձրանում ելին ծխի կապույտ քուլաները և գեղեցիկ շինութունների ձևով ծածկում ելին գյուղը գնացքի պատուհանից դիտող մի զուգ աչքերի առաջ:




Ց Ա Ն Կ

«Կոմունի ջաղացը»	3
«Դյուղքանդին պավեսկա չկա»	47









ԳԻՆԸ 20 ԿՈՊ

ՀՀ Ազգային գրադարան



NL0357540

53993